«ԱՅԲ» ավագ դպրոց

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ **2019 թ., ապրիլ**
Տևողություն՝ **1 ժամ 15 րոպե**

«Այբ» ավագ դպրոց

ԳԾԱԿՈԴ

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Բոլոր պատասխանները գրել այս քննաթերթիկի մեջ՝ համապատասխան տեղերում:
Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:
Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Այս փաստաթուղթը բաղկացած է **7** տպագիր և **1** դատարկ էջերից:

© «Այբ» ավագ դպրոց

1. Անհրաժեշտ տեղում լրացրո՛ւ բաց թողած տառերը, երկհնչյունները:

Մի թագավոր իր զորքով ճանապար□ էր գնում: Նա երկու սուր□ հայրերի տեսավ գա□շելի հա□ուստով: Թագավորը կանգ առավ: Նա ի□ավ նժույգից և խոնար□վելով համ□ուրեց նրանց *ձեռքերը*: Զորավարներն սկսեցին տրտնջալ, թե թագավորն իր մեծամեծ իշխաններին պատվի չի արժանացնում, բայց չնչին *մարդկանց* մեծարում է:

Թագավորը իմանալով այդ մասին հրամայեց շուտափույ□ չորս սնդուկ սար□ել. երկուսը արտա□ուստ գեղեցիկ ու քանդակազար□, լի ա□բով ու ավազով, իսկ մյուս երկուսը արտա□ուստ տհաճ, կպրոտ, մեջը լի ոսկով ու մար□արտով: Եվ կանչելով բա□բասող իշխաններին բարեշնորհ թագավորն ասաց.

— Գնահատեք և ընտրեք չորս կնքած արկղերից որևէ մեկը:

Նրանք անմի□ապես ընտրեցին գեղեցիկները և երբ բացելով տեսան, որ դրանք լցված են ա□բով ու *ավազով* զղ□ացին:

Թագավորն ասաց.

— Այդպես նայում եք երեսին և պայծառ հա□ուստին այն մարդու, որ ներ□ուստ լի է *ա□տեղությամբ*: Իսկ այն սուր□ հայրերը, որոնց հանդիպեցինք արտա□ուստ էին կեղտոտ, իսկ ներ□ուստ լի *հո□ու* շնոր□ով:

5 միավոր

2. Տեքստում կան կետադրական բացթողումներ. լրացրու՛ դրանք:

2 միավոր

© «Այբ» ավագ դպրոց

3. Գրի՛ր հետևյալ բառերի հոմանիշները և հականիշները:

գեղեցիկ ----------

գարշելի ----------

մեծարել ----------

աղտեղություն ----------

2 միավոր

4. Տեքստից դո՛ւրս գրիր տրված կաղապարներին համապատասխան երկուական բառ.

Արմատ + վերջավորություն ----------

Արմատ + վերջածանց ----------

Արմատ + վերջածանց + վերջավորություն ----------

Արմատ + հոդակապ + արմատ ----------

2 միավոր

5. Տեքստում գտի՛ր այնպիսի բարդ բառ, որն ունենա ա/մակբայով, բ/ ածականով արտահայտված արմատ: Դու՛րս գրիր այդ բառերը և արմատները ընդգծի՛ր:

ա ----------

բ ----------

1 միավոր

© «Այբ» ավագ դպրոց

6. Տեքստից դո՛ւրս գրիր 1 պատճառական բայ և կազմի՛ր այդ բայի հրամայական եղանակը, սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևը (բայերը գործածի՛ր դրական և ժխտական խոնարհումով):

Պատճառական բայ ----------

հրամայական եղանակ ----------

անցյալ կատարյալ ----------

1,5 միավոր

7. Դո՛ւրս գրիր տեքստում ընդգծված բառերը և որոշի՛ր դրանց հոլովը, հոլովումը և նախադասության մեջ շարահյուսական պաշտոնը:

---

3 միավոր

8. Տեքստից դո՛ւրս գրիր

ա. պարզ համառոտ մեկ նախադասություն և ընդարձակի՛ր:

բ. պարզ ընդարձակ մեկ նախադասություն և դարձրու՛ բարդ:

1,5 միավոր

© «Այբ» ավագ դպրոց

9. Գտի՛ր և ուղղի՛ր սխալները այն նախադասություններում, որտեղ դրանք առկա են (բառագործածության, խնդրառության, համաձայնության):

ա Ես ուզում եմ, որ ինձ՝ որպես թագավոր, գնահատեն ու սիրեն ոչ թե արտաքին, այլ ներքին հատկանիշների պատճառով:

բ Թագավորը ծրագրավորել էր պատկերավոր բացատրություն տալ:

գ Պետք է պայքարել այն ամենի դեմ, ինչը խոչընդոտում է ստեղծարար ոգուն և առաջընթացին:

դ Արքան խրախուսում էր մարդկայինն ու վսեմը:

2 միավոր

© «Այբ» ավագ դպրոց

Լեզվամտածողություն

1. Հակիրճ շարադրի՛ր մտքերդ այս առակի մասին:

---

3 միավոր

2. Ինչպե՞ս կվարվեիր դու թագավորի փոխարեն:

---

3 միավոր

3. Բնութագրի՛ր թագավորին:

---

2 միավոր

© «Այբ» ավագ դպրոց

4. Գրի՛ր իշխաններից մեկի խոսքը՝ ի պատասխան թագավորի արարքի:

---

2 միավոր

5. Գրի՛ր *մարդ* բառով երկու դարձվածք և բացատրի՛ր:

---

2 միավոր

© «Այբ» ավագ դպրոց

© «Այբ» ավագ դպրոց